

Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել: Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ [հետևյալ հղմամբ](#):

Ուժի մեջ է 21.11.2024թ.-ից

Ծառայություն			Սակագին*	
Ներդրումային (բրոքերային) ծառայություններ**	ՀՀ-ից դուրս թողարկված արժեթղթեր	Բաժնային ¹ և ոչ բաժնային ¹ արժեթղթեր	0.20%, նվազ. 20,000 ՀՀ դրամ	
		ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր	պատվերի տրման ամսաթվից մինչև արժեթղթի մարման ամսաթիվ՝ 120 օր	0.10%, նվազ. 20,000 ՀՀ դրամ
			պատվերի տրման ամսաթվից մինչև արժեթղթի մարման ամսաթիվ՝ 121-210 օր	0.15%, նվազ. 20,000 ՀՀ դրամ
		Խնդրահարույց ակտիվներ (Distressed assets)		1.25%, նվազ. 20,000 ՀՀ դրամ
		Այլ (third-party products, structured notes, non traditional funds ²)		1%, նվազ. 20,000 ՀՀ դրամ
	ՀՀ-ում թողարկված արժեթղթեր	Բաժնային արժեթղթեր		0.35%, նվազ. 5,000 ՀՀ դրամ
		ՀՀ պետական պարտատոմսեր		0.05%, նվազ. 1,000 ՀՀ դրամ
		Արդշինբանկ ԲԲԸ պարտատոմսեր		0.05%, նվազ. 1,000 ՀՀ դրամ
		Այլ ոչ բաժնային արժեթղթեր		մինչև 20 մլն՝ 0.1%, նվազ. 2,000 ՀՀ դրամ 20 մլն և ավել՝ 0.05%, նվազ. 2,000 ՀՀ դրամ

1 Բաժնային արժեթղթեր են համարվում բաժնետոմսը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթուղթը, ցանկացած այլ արժեթուղթ, որն իրավունք է տալիս ձեռք բերել վերոնշյալ արժեթղթերը փոխարկման, փոխանակման կամ այլ իրավունքների իրականացման եղանակով և թողարկվել է վերոնշյալ արժեթղթերի թողարկողի կամ նրանց խմբի անդամ թողարկողի կողմից: Ոչ բաժնային արժեթղթեր են համարվում ցանկացած այն արժեթուղթը, որը, չի համարվում բաժնային (<< Արժեթղթերի շուկայի մասին օրենք):

2 Non traditional funds են համարվում բորսայում առևտրին չթույլատրված ֆոնդի փայերը:

* Սակագները հաշվարկվում են << դրամով՝ Բանկի կողմից սահմանված անկանխիկ առքի փոխարժեքով:

** Հաշվարկի համար հիմք է վերցվում գործարքի գումարը:

Կայքում հրապարակված Սակագները տարածվում են ֆիզիկական անձ Հաճախորդների վրա, որոնք հանդիսանում են << քաղաքացի և որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է <<-ում:

«Արդշինբանկ» ԲԲԸ մատուցում է ներդրումային ծառայություններ «Արժեթղթերի շուկայի մասին» << օրենքով, << կենտրոնական բանկի կողմից ընդունված ներդրումային ծառայությունները կարգավորող կանոնակարգերով, կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով Բանկի կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերի գործարքների իրականացմամբ: Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում «Արդշինբանկ» ԲԲԸ իրականացնում է բրոքերային հաշիվների բացում, պատվերի ընդունում և կատարում, գործարքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում, ինչպես նաև ներդրումային գործունեությունից բխող այլ գործառնություններ: Հաճախորդը կարող է գործարքներ կնքել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կարգավորվող շուկայում գնանշվող ցանկացած արժեթղթով, ինչպես նաև մասնակցել առաջնային տեղաբաշխման և հետգնման աճուրդներին, հետգնումներին, իրականացնել գործարքներ արտաբորսայական երկրորդային շուկայում:

Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանները, այդ թվում՝ ծառայության շրջանակում Բանկի և հաճախորդի միջև պայմանագրի կնքման կարգը, հաճախորդի կողմից վճարումների իրականացման պայմանները, ժամկետներն ու եղանակները, Բանկի կողմից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, գործարքների կնքման նպատակով պատվերների ներկայացման և կատարման ընթացակարգը, ինչպես նաև պայմանագրի դադարեցման կարգն ու այլ համապատասխան դրույթներ, ներկայացված են Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների 13-րդ գլխում:

[Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ](#)

Կարևոր է իմանալ

■ Բանկը «Փողերի վաճման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» << օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել

	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Էջ 3 / 3
		Ուժի մեջ է՝ 21.11.2024թ. -ից

լրացուցիչ [փաստաթղթեր](#) կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

■ Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

■ Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Արդշինբանկ» ՓԲԸ հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ www.fininfo.am, ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է: